

ՅԵՂԻՇԵ ԶԱՐԵՆՑ



Զ Ո Ր Ս ԲԱԼԼԱԴ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴԵՆ. ԿԵՆՏՐ.
ՀՐԱՏԱՐԱԿ Զ ՈՒԹՅՈՒՆ

891.99

2-28

891-33

19 NOV 2011

9-28

ՅԵՂԻՇԵ ԶԱՐԵՆՑ

ky

ԶՈՐՍ ԲԱԼԼԱԴ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԻՌՍԿՎԱ, 1929

2774

16 JUL 2013

48995



Глвлвт № А 13356

Заказ № 532.

Тираж 3.000 экз.

Книжная фабрика Центр. Изд-ва Нар. СССР. Москва. Шлюзовый пр., 6.

1. ԻՄ ԸՆԿԵՐ ԼԻՔՈՆ

(Բալլադ մանկության, բախտախաղի, պայքարի յեմ
հերոսության մասին)

Ընկեր Լիպարիտ Մխչյանի հիշատակին.

Մանկությունը հիշելիս՝ սիրտս դառնում է զինով...
Յես մի ընկեր ունեի՝ Լիբո անունով:

Ինչքան հիշում եմ նրան՝ աչքերիս հանդեպ
մի նայիրյան տեսարան բացվում է հապճեպ:

Փռվում է դեմս իսկույն մի փողոց խաղաղ —
ու փողոցի անկյունում — մի վտիտ տղա:

Նիրհում է Ղարսը՝ խաղաղ ամառնամուտին...
Ինչքան վտիտ է տղան այդ վոստաբորիկ:

Նա նստած է մի քարի — տաննամյա տղան,
ու նիրհում է — առաջին մի ցածրիկ սեղան:

Կլոր սեղան է ցածրիկ, մեջտեղում — մի չարիս.
րախտախաղ է մանկական — կռակենոց վիճակ:

Տնւր մի կռակել ու խփել, — թե բախտը բանեց —
մի տուփ լուցկի կամ մի տուփ քորոց կհանես:

Կապուտաչյա այդ տղան, ախ, ինչքան եր չար.
մեզ հետ կռվում եր հաճախ, խաբում չարաչար:

Բախտը ժպտար յեթե մեզ ու լուցկի հաներ —
նա իր չարիքը կծուեր ու կռիվ կաներ:

Ուներ բարի նա մի մայր՝ ծեր ու չքավոր.
միակ նեցուկն եր տղան՝ բոլորին պահող:

Ինչքան հիշում եմ հիմա մահկոթյունս յես —
կապուտաչյա այդ տղան յեղնում ե իմ դեմ:

Տեսնում եմ միշտ նրան յես իր չարխի առջև...
Հետո որեր անցան շատ, սլացան հապճեպ:

Ու կորցրի յես նրան: — Աշխարհում այնինչ
յեկան որեր հուրհուրան, տարիներ հապճեպ:

Պատերազմներ յեղան մեծ, պայքարներ լաղում —
և ամբողջ կյանքը փոխվեց, ինչպես յերազում:

Դասակարգեր ընկան հին ու յեկան նորեր —
որեր վառվառ ու անգին, անմոռաց որեր...

Մի որ յեկանք ու առանք Յերևանը մենք —
հետո դաշնակը շարժեց մառդեր ու գենք:

Նահանջեցինք քաղաքից մենք լուսաբացին —
և ընկերոջս նորից յես հանդիպեցի. —

Յերկու ամիս եր արդեն ճակատում եինք —
վերջին որերը միայն մենք հանդիպեցինք:

Լիպարիտ եր դարձել նա, իմ ընկեր Լիրոն.
արշավում եր բանակում՝ ազգի շապիկով:

Նա զինկոմն եր մեր գնդի, մեր գնդի հոգին,
անճանաչ եր համարյա՝ գորշ շինելն հազին:

Ճանաչեցի սակայն յես: — Մոտեցա նրան,
ասի՝ հիշում ես, Լիրոն, Ղարսը նայիրյան...

— Հիշում ես չարիքը քո են... — Նա ժպտաց ու խիստ
ասաց. — Գնում ենք եզուց. պատրաստվիր, Յեղիշ:

— Դե, են չարիքը... նա չկա... չկա... Հիմա մենք
ուրիշ չարիքեր պիտի այս աշխարհում շարժենք:

— Բախտախաղ չե սակայն սա, այլ կռիվ ու կամք.
լուսաբացին մենք պիտի առաջանանք...

— Դաշնակը խաղ ե կարծում, հանաք ե անում...
Դե, կխոսենք մենք մի լավ — Յերևանում...

...Լուսաբացին մենք անցանք գրոհի —
լուսաբացին խփեցին Լիրոյին...

Լուսաբացին նա ընկավ կռվում,
յերբ հաղթանակն եր վառվում, փռվում:

Ընկավ կռվում
մեր զինկոմն արի.
Ընկավ Լիրոն
Յերևանի
ճանապարհին...

...Լուսաբացին Յերևանը յերկաց.
լուսաբացին մենք մտանք Յերևան:

Լուսաբացին մեր բանակը հաղթական
քաղաք մտավ՝ հետը կարմիր մի դադաղ...

Լուսաբացին վնչ մի «ախ» —

Սակայն —

Լուսաբացին դրոշներ հուրհուրան
իջան ընկեր Լիպարիտի
վրա...

Խոնարհվեցին դրոշները բանակի —
ու պառկած եր իմ ընկեր Լիբոն՝
ռազմի կարմիր իր զգեստներն հագին:

Փառք քեզ, փառք քեզ,
մեր զինկոմ
արի. —

փառք, վոր ընկար
հաղթանակի
ճանապարհին...

Հիմա Լիբոն իմ չկա, նա չկա հիմա, —
սփ չի սակայն յերազում այդս իսի մի մահ...

Նա պառկած է
Կոմունարների
այգում.

— Փառք քեզ, ընկած
մեր քաջարի
զինկոմ:

Դու պայքարի
դրոշ յեղար
վառ մի.

— Թե տեսնեյիր ի՞նչ ե դարձել
մեր Բանակը
Կարմիր:

Նա աշխարհում բանակն է, ո, առաջին —
և վնչ մի ուժ չի գիմանա առաջին:

Ննջիր խաղաղ
Կոմունիստների
այգում.

— Փառք քեզ, ընկած
մեր քաջարի
զինկոմ...

2. ԲԱԼԼԱԴ ԳԵՐԴՋԿԱԿԱՆ

(Աղջկաներ պարում են ու յերգում)

— Սիրոն աղջիկ, ռոմն ես սիրում աշխարհում —
սավետական ես մեր սիրուն աշխարհում:

— Քաղքից եկած են տղին՝ եմ յես սիրում,
կեպի դրած են տղին՝ եմ յես սիրում,
աչքերը շող են տղին՝ եմ յես սիրում,
մաշին քշող են տղին՝ եմ յես սիրում...

— Ընչի՞ համար դու չես սիրում են տղին,
բոյը սիրուն, բուսը սիրուն են տղին,
հոնքը կխած, բեխը սրած են տղին,
գլխին սև-սև փափախ դրած են տղին,
մաուզերը կողքից կախած են տղին,
մեր հանգերից հեռու փախած են տղին...

— Ընչի՞ սիրեմ բեխերը ցից են տղին,
հոյը գնեմ սև ու անսիրտ են տղին,
ձեռքը տուռ, խելքը տուռ են տղին,
թալան տվող լիրբ ու հարուստ են տղին,

մաուզերին ձեռքը դրած են տղին,
ըռանչալարի շիվան ու լաց են տղին...

— Են վոնց եղավ, վոր քեզ սիրեց են տղեն:

— Շեկ մաղերիս աչքը չոեց են տղեն,
ալոտտ աչքը վրես ածեց են տղեն,
մաուզերից կրակ բացեց են տղեն,
ալևորի՜ մորս ծծեց են տղեն,
ջահել սրտես արուն ծծեց են տղեն...

— Յերբ պատահեց եդ բոլորը աշխարհում:

— Յերբ դեռ սև եր խալխի որը աշխարհում,
յերբ դաշնակի ձեռն եր տիրում աշխարհում,
յերբ դովլաթի տերն եր տիրում աշխարհում,
յերբ ռանչալարին արև չկար աշխարհում,
յերբ ռանչալարի որն եր խավար աշխարհում...

— Են վոնց յեղավ՝ քեց հորդդ նա գեղից,
եկավ, քչից քաջ ախպորդ նա գեղից,
կրակ տվեց, ավար հանեց նա գեղից —
քիչ եր մնում՝ քեզ ել տաներ նա գեղից...

— Եդ են կրակ, ցավ տարին եր մեր գեղում,
յերբ սև կրակ ու արին եր մեր գեղում,
ըռանչալարը թվանք առավ մեր գեղում,
են սև տղեն մի հավ դառավ մեր գեղում,
հետո են սև Սեպուն եկավ մեր գեղում,
եկավ, փոեց կրակ ու ցավ մեր գեղում,
ըռանչալարին գերի արավ մեր գեղում,
արունն ելավ — սելավ դառավ մեր գեղում...

— Թվանք առած՝ փախավ հերըս մեր գեղից,
հետը փախավ քաջ ախպերըս մեր գեղից,
ինչքան ռանչալար — տղամարդ կար — մեր գեղից
յեկան գացին Ղազախու սար մեր գեղից...

— Հետո եկավ, գեղը տիրեց են տղեն,
շեկ մազերիս աչքը չոեց են տղեն,
արնոտ աչքը վրես ածեց են տղեն,
մաուզերից կրակ բացեց են տղեն,
ալեորիկ մորս ծեծեց են տղեն,
ջահել սրտես արուն ծծեց են տղեն...

— Հետո եկան վառման որեր, հետո կովի որեր եկան,
գեղից գացած իմ ախպերներ պոպոզավոր, հուրհեր եկան,
ալեորիկ իմ ձերն եկավ,
իմ բալշիկ ախպերն եկավ...

— Են որվանից, յերբ ախպերս եկավ գեղ,
յերբ բալշիկ, ռանչալար հերս եկավ գեղ —
կարմիր գարուն, կանանչ արև եկավ գեղ,
բանվոր տղից, քաղքից բարև եկավ գեղ...
Մաշին նստած՝ բանվոր տղեն եկավ գեղ —
վոնց վոր գարուն մի հրեղեն — եկավ գեղ...

— Ընչի՞ համար ել յես սիրեմ են տղին,
մազերը սև, աչքերը սև են տղին,
հոնքը կիտած, բեխը սրած են տղին,
գլխին սև-սև փափախ դրած են տղին,
մաուզերը կողքից կախած են տղին,
մեր հանդերից հեռու փախած են տղին...

— Իմ ուղածն ե քաղքից եկած են տղեն,
աչքերը բաց ու միտքը բաց են տղեն,
գլխին կաշե կապի դրած են տղեն,
ըռանչալարի սրտով սիրած են տղեն...

— Յես են տղի տեսքն եմ սիրում աշխարհում,
մաշին քշող ձեռքն եմ սիրում աշխարհում,
նրա անուշ յերգն եմ սիրում աշխարհում,
սավետական ես մեր սիրուն աշխարհում...

3. ԲԱԼԼԱԴ ԳՆԴԱՊԵՏ ՏՈՄՍՈՆԻ, ԿՈՄՍՈՄՈԼԻՍԻ ԽՈՒՒ ՅԵՎ ԳՈՐԾԱԴՈՒԼԻ ՄԱՍԻՆ

Քաղաք իմ, քաղաք իմ, քաղաք իմ — Բագու, —
վորքան հեքյաթներ կան այս գորշ քաղաքում...

Յես ունեմ ընկեր մի, ընկեր մի մոտիկ,
նա մեջքին կապում է մի բարակ գոտի,
նա գլխին դնում է հասարակ կեպի —
խակական մի հերոս է չգրված վեպի,
հասարակ բանվոր է նա Բալախանում —
փորում է նա հողը ու նավթ է հանում:

Քաղաք իմ, քաղաք իմ, քաղաք իմ Բագու, —
վորքան հեքյաթներ կան այս գորշ քաղաքում...

Այս վտիտ բանվորը, այս վտիտ տղան
այն տարին յեղել է համարյա խոխո: —
Այդ այն մուրթ տարին եր, յերբ ծովի բացից
գրավեց քաղաքը մեր — անգլիացին:
Յերբ յեկավ, նստեց նա ու հպեց պատին
մեր ըմբոստ քաղաքն ու պրոլետարիատին:

Տոմսոնի կոշիկն եր քաղաքում տիրում, —
թշնամին դաժան եր, բարեկամն — հեռու...
Բայց յե՞րբ է բանվորը լռել աշխարհում, —
նա խուլ պայքալ սւմ եր, անգուլ պայքարում:

Քաղաք իմ, քաղաք իմ, քաղաք իմ — Բագու, —
վորքան հեքյաթներ կան այս գորշ քաղաքում...

Այդ մուրթ որերին եր, յերբ մի որ բերին
լցրեցին բանտերը մեր ընկերներին:
Յեվ վաղ առավոտը, հանկարծ, դեմուդեմ —
մեր վտիտ խոխին այս կանչեց Կոմիտեն:
Գաղտնի Կոմիտեն մեր կանչեց ու ասաց,
«— Դու քաջ կոմսոմոլ ես՝ հասակդ առած —
քո հայրը բանվոր է, ինքդ — պրոլետար.
տեսնո՞ւմ ես թղթերը. — վերցրո՞ւ ու տա՛ր:
Մերոնք գործադուլ են պատրաստում արդեն.
այս խող գնդապետը յեղել է մեր դեմ —
ուզում է վողջին նա դարձնի գերի.
կտանես այս թղթերը նրա գորքերին,
կմանես փողոցները խռիվ ու բանուկ —
իրեւ թե աֆիշ ես հանգիստ բաժանում»:

Քաղաք իմ, քաղաք իմ, քաղաք իմ — Բագու, —
վորքան հեքյաթներ կան այս գորշ քաղաքում...

Հրճվանքից շողաց մեր քաջ խոխի հոգին,
կարծես թե նա տերը դարձավ քաղաքի.
աչքերում ցոլաց մի խնդուկյուն անհուն, —
տեսե՞ք՝ ինչ գործեր են նրան վստահում...

Ճերմակ թերթիկները գրպանը խոթեց. —
խսկի չվախի թող գաղտնի Կոմիտեն:
Ու վազեց, վազեց նա սրտի գողոցով.
դիմացից՝ մի վաշտ եր անցնում փողոցով. —
զսպելով սրտում իր մի կրծող, մութ բան —
մոտեցավ նրանց նա ու ասաց «գուգրայ»...
Ասաց, ծիծաղեց նա կամաց, ինքնիրեն —
ու հանեց թերթիկները, սկսեց ցրել...

Քաղաք իմ, քաղաք իմ, քաղաք իմ — Բագու, —
վորքան հեքյաթներ կան այս գորշ քաղաքում...

Այս լ՛նչ քաջ տղա յե, այս լ՛նչ լավ ցրիչ...
բոլոր զինվորները մեկ-մեկ վերցրին.
սակայն հայհոյանքը կոկորդում զսպած՝
մեք խոխի գլուխը արնոտեց սպան:
Հարվածեց, գլուխը արնոտեց խոխի —
կարմիր կաթիլները թափվեցին հողին...
Բայց յերկրորդ հարվածը յերբ ոգում շողաց —
արդեն չքացել եր, կորել եր խոխեն...

Քաղաք իմ, քաղաք իմ, քաղաք իմ — Բագու, —
վորքան հեքյաթներ կան այս գորշ քաղաքում...

Հեիհե հասավ մեր Կոմիտեն խոխան.
արնոտած յերեսը հրճվանքից շողաց.
կապեցին գլուխը, գրին անկողին.
ուղարկող ընկերը համբուրեց խոխին...
Հետո գործադո՛ւ մեծ յեղավ քաղաքում —
յեկան բանվորները — ու հաղթեց Բագուն:

Ամբողջ պրոլետարը կանգնեց դեմուդեմ —
խողով Տոմսոնի՛ն այն հաղթեց Կոմիտեն...

Հաղթեց գործադուլը ինգլիշ գործերին —
Բագվի պրոլետարը չդարձավ գերի.
սարսեց զնդապետը մեր ուժից անթիվ —
և յեկան ընկերները Բայիլի բանտից...

Քաղաք իմ, քաղաք իմ, քաղաք իմ — Բագու, —
վորքան հեքյաթներ կան այս գորշ քաղաքում...

Կեցցե գործադուլը, կեցցե Կոմիտեն,
կեցցե և փոքրիկ այն, կոմսոմոլ խոխեն,
կեցցե մեր պայքարը ու կամքը արի —
կեցցեն բանվորները համայն աշխարհի...

Քաղաք իմ, քաղաք իմ, քաղաք իմ — Բագու, —
վորքան հեքյաթներ կան այս գորշ քաղաքում...

4. ԲԱԼԼԱԴ ՔՍԱՆԸՎԵՑԻ ՄԱՍԻՆ

1.

Ամեն առավոտ ծեղին,
յերբ քնից զարթնում ե Բագուն,
յերբ, յեւած գիշերվա մեզից,
արթնանում ե կյանքը քաղաքում, —
յերբ ձայնով աշխուժ ու հնչուն,
քաղաքի բոլոր մասերից
շշաղները գործի յեն կանչում
պրոլետարներին, —
քաղաքի ծայրերից բոլոր
ձգվելով յերբ շարան-շարան
բանվորները հոծ խմբերով
շտապում են դեպ գործարան —
ամեն առավոտ ծեղին,
այդ ժամին գորշ, մխերանգ —
ձուլվելով յերթին ամենքի —
քաղաքից անցնում են և նրանք:

2.

Քսանքվեց հոգի յեն նրանք —
և խոհուն, մտադրաղ են բոլորը: —

2022-54

327

Առջևից գնում ե նա —

յերկաթյա կարմիր կոմանդորը:
Քայլերով հաստատ, համաչափ
հետևում են նրան ընկերները,
ընթանում են քայլերով շտապ,
շտապում են դեպի վիշկաները:
Աննկատ, ձուլված ամենքին,
քայլում են նրանք դեպի ծովը.
վողջունում են ջրերը դեմից,
համբուրում ե հովը:
Համբուրում ե դեմքերը քամին,
շշնջում ե խոսքեր Հյուսիսի.
երկաթյա շքախումբ ե դա մի —
գնում ե զորհանդեսի: —

3.

Քայլերով հաստատ, համաչափ
ընթանում են նրանք խմբովին,
անցնում են բուլվարի միջով,
մոտենում են ծովին:
Խփում ե ծովը ափերին,
յերկինքը գորշ ե, կապար,
ձոճվում են նավերը սևերիդ՝
շղթայով ափին կապած:
Իսկ հեռուն — ուրիշ նավեր,
կողերով ծանր նստած՝
սահելով գնում են վեր —
դեպի Պարսկաստան...
Գնում են դեպի Ենդեղի,



գնում են դեպի Իրան,
տանում են յերկրից Լենինի
մի հեղուկ ալ-հուերհուրան:
Նայում են նրանք նավերին
և իրենց շրթերով անբառ,
անսահման խինդը դեմքերին՝
շշնջում են. — Բարև ճամփա...

4.

Տեսնում են ապա հեռվում
և ուրիշ նավեր նրանք.
մշուշում նրանց յերևում,
արևում են ափեր հուերհուրան:
Տեսնում են նավեր ծանրակող,
վոր ջրերը խորունկ արխած՝
գնում են դեպի Կրասնովոդսկ,
գնում են դեպի Հաշտարխան...
Նայում են կարոտով անդուլ
այդ հեռու ափերին նրանք.
մի յերգ և այնտեղից հոնդում,
խնդալով վողջունում նրանց:
Դաշտերում անրեր ու ամա
տեսնում են հազար նվաճում.
յերկաթե անտառի նման
սերունդներ են յելնում ու աճում:
Հասնում են նրանց ականջին
վիթխարի մուրճերի ձայներ.
շշակներ են թնդալով կանչում,
աշխատանքն և հնչում այնտեղ:

Լսում են նրանք այնտեղից
բյուրավոր վոտքերի դոփյուն.
քրալինք և բարձրանում հանդերից,
մի կուրծք և անդուլ տրոփում:
Նայում են հրճվանքով անհուն —
ու խնդուն յեռանդով ջամբած՝
Կոմանդորը ձեռքով և անում —
ու թեքում են նրանք ճամփան...

5.

Ու, կրկին հեռուն նայելով,
քայլերով հաստատ, համաչափ —
անցնում են նրանք Բայիլով,
մտնում են քաղաքը նվաճած...
Տարիներ են անցել կորովի,
սուրացել, գնացել անդարձ —
ու յելել և նահանջող ծովից
մի ամբողջ նոր նավթանտառ:
Ուր ծոցը եր առաջ շառաչում
յեփվելով զուր յեռանդից —
վիշկաներ են հիմա աճում,
վիշկաներ անծայր, անթիվ:
Թնդում և յերկիրը նվաճած,
շնչում և յեռանդ ու կրակ,
անցնում են քայլերով համաչափ,
յերկաթե քայլերով նրանք:
Դեմքերով՝ վառված արևից,
մազուլով, մրով ծեփած՝
վիշկաները կեցած բարեի

ասում են. — Բարե՛, Ստեփան...
 Աշխատում են, յեռում են բոլորը.
 մրտաժ դեմքեր ու ձեռներ: —
 Հիացած՝ Կարմիր Կոմանդորը
 շշնջում է. — Բարե՛, ընկերներ: —
 Ու մտնում են նրանք վիշկաները,
 յերկաթե քայլերով շրջում. —
 դառնում են փոկերն, անիմները,
 յեռանդի ձայնով շշնջում:
 Շշնջում է Կարմիր Կոմանդորը
 փոկերի աղմուկի միջից —
 և լսում են, լսում են բոլորը
 նրա ձայնը ջինջ ու վճիտ:

6.

Յեւ ասում է նա — Կոմանդորը. —
 «Տոկացեք, ընկերներ անգին.
 ձեր ամեն մի փորած նալթահորը
 մի քայլ է ցանկալի կյանքին:
 Բացվել է հորիզոնը լուսե,
 պայծարով ակոսել մի կյանք.
 ձեզ համար գիշերով մի սև
 ավազե դաշտերում մենք ընկանք:
 Քսանըվեց եյինք մենք, քսանըվեց,
 բայց անթիվ, անթիվ է մեր անունը.
 վոչ գնդակը մեզ սպանեց
 և վոչ ել կսպանե հողնաթյունը:
 Քանի կաք, ընկերներ, քանի կաք,
 քանի կա աշխատանքը անդուլ —

մեր յերթին — վախճան չկա,
 մեր պայծառ գործին — պարտություն:
 Տոկացեք, ընկերներ, մենք ձեզ հետ ենք,
 տոկացեք, ընկերներ անգին,
 վոր անցնենք այս նեղ արահտը
 և հասնենք ցանկալի կյանքին...»

7.

Շշնջում է Կարմիր Կոմանդորը
 փոկերի աղմուկի միջից —
 և լսում են, լսում են բոլորը
 նրա ձայնը ջինջ ու վճիտ:
 Ու անտես ամենքին, ինչպես ուրիշ,
 այնտեղից յեկնում են նրանք,
 թողնելով սրտերում հուր շփնդ մի,
 վառելով անմար մի յեռանդ:
 Ու կրկին, հրճվանքով անհուն,
 զլուխը բարձր ու ուղիղ՝
 Կոմանդորը ձեռքով է անում
 և փոխում են նրանք ուղին:
 Հոնդում է դեմից քամին,
 բայց անշեղ քայլերով նրանք
 անցնում են Բալախանի,
 մտնում են գործարան ու հանք:
 Շրջում են այդպես ամենուր,
 մտնում են գործարան, զավոդ,
 չեմքերին իջնում է մուր,
 շորերին նստում նալթի հոտ:
 Յեւ մինչև բարձրանում է որը,

դառնում ե թնդացող ցերեկ —
շրջում ե Կարմիր Կոմանդորը,
լինում ե ամենուրեք:
Ձուլվելով դարձող փոկերին,
աղմկող ութմերի միջից
խոսում ե ընկերներին
իր ձայնով հաստատ ու վճիռ:
Ու, ութմի նման անտես,
ձուլվելով սրտերին նրանց —
շնջում ե, շնջում ե անվերջ,
անդադար ավյուն ու յեռանդ:

8.

Յեվ ապա, յերբ դառնում ե որը
շառաչուն, թնդացող ցերեկ —
իրարից բաժանվում են բոլորը,
ցրվում են ամենուրեք:
Մտազբաղ, գլուխը թեքած,
քայլերի համաչափ դարկով —
Ստեփանը գնում ե Յեկա,
Զափարիձեն — գեպի Սովնարկում:
Դնում են ե մյուս ընկերները,
ամենքին անտես քայլերով
անցնում են բոլոր փողոցները,
մտնում են հիմնարկները բոլոր:
Սրտերում անբոց մի կրակ,
պայքարում կոփված խոսքերով
ամենուր շնջում են նրանք
անդադար յեռանդ ու կորով:

Աշխատանքը անտակ ե, մեծ ե,
թշնամին անտես ու դմի —
ե շրջում են այդպես Քսանըվեցը,
մինչև իրիկունը իջնի:
Շրջում են անվերջ, շնջում են,
առորյա աշխատանքը հսկում,
մինչև իրիկունը իջնում ե
ու վառում կրակներ վոսկուն:
Յեվ իջնում ե յերբ իրիկունը,
վոր հոգնած սրտերին նստի —
Քսանըվեցը անխոս հեռանում են,
գնում են հանգստի:

9.

Յեվ ամեն առավոտ, յերբ որը
բարձրանում ե՝ հոգսը թեին —
շրջում ե Կարմիր Կոմանդորը՝
քսանհինգ ընկերներ յետևից:
Շրջում են բոլոր վիշկաները,
մտնում են գործարան ու հանք —
Քսանըվեց կարմիր ընկերներ են,
քսանըվեց մարտիկներ նրանք:
Ձուլվելով դարձող փոկերին,
աղմկող ութմերի միջից
խոսում են ընկերներին
ձայներով հաստատ ու վճիռ:
Ասում են նրանք. — Տոկացեք,
տոկացեք, ընկերներ անգին,
վառվել ե հորիզոնը լուսե,



առավոտը ցանկալի կյանքի:
 Քանի կաք, ընկերներ, քանի կաք,
 քանի կա աշխատանքը անդուլ —
 մեր յերթին — վախճան չկա,
 մեր պայծառ զործին — պարտություն...

Ց Ա Ն Կ

	Եջ.
1. Իմ ընկեր Լիբոն (բալլադ հերոսական)	3
2. Բալլադ գեղջական	8
3. Բալլադ գնդապետ Տոմսոնի, կոմսոմոլիս խոխի ու զործադուլի մասին	12
4. Բալլադ փանրկեցի մասին	16

ՀՀ Ազգային գրադարան



NL0356577

154

48995



Е. ЧАРЕНЦ

**Четыре
баллады**

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СОЮЗА ССР
Москва, центр, Никольская, 10